ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

ի պատասխան Ձեր 14.05.2025թ. հ.107-2025 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի ծրագրերով իրականացվում են բազմաբնակարան շենքերի գործող հին վերելակների նորով փոխարինման աշխատանքներ, իսկ Նազարբեկյան թաղամասի հ.48 հասցեում ի սկզբանե վերելակների հորաններն առկա են, սակայն վերելակներ տեղադրված չեն եղել:

Միաժամանակ տեղեկացվում է, որ դեռևս 2025 թվականի փետրվար և մարտ ամիսներին Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ, Նազարբեկյան թաղամասի հ.48 հասցեում, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալի, կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալի, Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի և համապատասխան մասնագետների կողմից տեղում՝ շենքի բնակիչների մասնակցությամբ, կատարվել են ուսումնասիրություններ: Ըստ այդմ էլ, ուսումնասիրության աշխատանքներին մասնակից մասնագետների կողմից առաջարկվել է նախ իրականացնել հորանի չափերի ճշգրտման և համապատասխանեցման աշխատանքներ: Շենքի երեք մուտքերի հորանների համապատասխանեցումից հետո ձեռք կբերվեն անհրաժեշտ չափերի վերելակներ և կիրականացվեն դրանց տեղադրման աշխատանքները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ